«Դիլիջանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամ
ք. Դիլիջան 3905, Մոլդովական 77
Հեռ.՝, + 374 94 543707
Էլփոստ՝ welcome@dcs.am
Կայքէջ՝ www.dcs.am

Քննական թեստի նմուշ
Մայրենի
5-րդ դասարան

Անուն, ազգանուն_____ Ամիս, ամսաթիվ_____

1.Կարդա՛ տեքստը և լրացրո՛ւ բաց թողած տառերը: [12]

Մի զինվոր արշավանքից տուն էր վերադառնում: Հարազատ վայրերից ոչ շատ հեռու մի լայնահուն գետ փակում է նրա ճանապարհը: Բայց ռազմիկը տեսնում է նավավարին և խնդրում իրեն անցկացնել գետի մ_ուս ափը: Երբ նավակը գետի մե_տեղն է հասնում, հանկարծ հզոր հորձանք է բարձրանում, և հայտնվում է մի կատաղի վիշապ: Երկինքն անմի__ապես ծածկվում է սև ամպերով, փայլատակում է կայծակը, փչում է քամին, գետի զուլալ ջրերը մի ակնթար__ում պ__տորվում են, և սարսափելի փոթորիկ է բարձրանում: Հսկայական ալիքները այս ու այն կողմ են շարտում նավակը, իսկ վիշապի երախից հուր է ժայթքում: Տեսնելով վիշապին՝ նավավարը նետում է թիակները, սարսափից գունատվում, փակում աչքերը:

_Ինչո՞ւ չես թիավարում,_գոռում է ռազմիկը:

Էլ ինչո՞ւ թիավարեմ, հուսաբեկ պատասխանում է նավավարը,_ չէ՞ որ մահն անխուսա__ելի է, և մեր վերջը եկել է:

_Մարդ չպետք է հնազանդ__ռեն սպասի մահվան, նա պարտավոր է պայքարե՛լ, կռվե՛լ իր կյանքի համար,-բացականչում է ռազմիկը և նետվում է ջուրը:

Եվ նավավարը տեսնում է, թե ինչպես է քաջարի ռազմիկը խրո__տաբար մարտնչում ամեհի վիշապի դեմ, ապա կտրում նրա գլուխը: Քամին նույն վայրկ_անին հանդարտվում է, ամպերը ցրվում են, գետը նորից հոսում է խաղաղ: Ռազմիկը բար__ռանում է նավակ, սուրը դնում պատյան և ասում.

_ Չար արարածները ապրում են լոկ այն պատճառով, որ բոլորը վախենում են նրանցից:

Դա__արի՛ր դողալ նրանց առջև, և նրանք չեն համար__ակվի այլևս երևալ քո աչքին:

2.Տեքստում գտի՛ր և դուրս գրի՛ր տրված բառերի հոմանիշներ: [12]

սփրթնել_____

մրրիկ_____

էակ_____

երբեք_____

վճիտ_____

կրակ _____

3.Տեքստում ընդգծված նախադասության մեջ ավելացրո՛ւ միջադաս կոչական և կետադրի՛ր: [5+2]

_____
_____

4. Տեքստից դո՛ւրս գրիր 5 բառ, որոնցում տառերի և հնչյունների քանակը հավասար չէ: [5]
_____
_____

5.Վանկատման եղանակով տողադարձի՛ր տրված բառերը: [10]
ճամպրուկ, հսկայական, կարկուտ, երևալ, շպրտել
_____
_____

6. Տրված բառերով կազմի՛ր երկուական նոր բառ: [10]
բույր _____
տուն _____
ձյուն _____
հանդես_____
սիրտ_____

7. Ըստ տրված բացատրությունների տեքստում փնտրի՛ր և գտի՛ր անհրաժեշտ բառերը, ապա գրի՛ր բացատրությունների դիմաց: [8]
ջրերի հորդ հոսանք _____
գազանի բերան _____
ուժեղ շիթով դուրս մղվել, բխել_____
միանգամից ուժեղ լույս արձակել, շողշողալ_____

Լեզվամտածողություն
8. Լուծելով նկարելուկը՝ գտի՛ր նավակ բառի հոմանիշը և գրի՛ր տողատակին: [5]

1,2 կեն , , ,

Պատասխան՝_____

9.Յուրաքանչյուր քայլում բառի մեջ փոխելով մեկ տառ՝ *նավ*-ից ստացել են *պատ:* Բաց թողած տեղում լրացրո՛ւ անհրաժեշտ բառը: [2]
նավ-կավ-կաթ- ... - սար-պար-պատ

10. Բառաշարքից դուրս գրի՛ր այն բառերը, որոնց մեջ *ակ*-ը չունի նվազական, փոքրացուցիչ իմաստ: [10]
նավակ, գետակ, կատակ, սայլակ, թիակ, դանակ, փեթակ, վերմակ, ապտակ, առվակ

11. Տրված առածներից ո՞րն է համապատասխանում տեքստին: [4]
ա/Տնիցդ որ հեռանաս, տանդ հարգը նոր կիմանաս:
բ/Մարդ ինչքան կռիվ անի, մի երեսը հաշտության համար կպահի:
գ/Հերոսը մեկ անգամ է մեռնում, վախկոտը՝ հազար:
դ/Փախիր էն ջրից, որ ո'չ թշշում է, ո'չ խշշում:

12. Ի՞նչ կարծիք կազմեցիր նավավարի և ռազմիկի մասին, ո՞ վ քեզ ավելի շատ դուր եկավ և ինչո՞ ւ: Մտքերդ շարադրի՛ր 6-7 նախադասությամբ: [15]